



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

2017թ. ապրիլի 14

N 47- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ԱԼԻՆԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՈՒ ԼՐԱՅՈՒՅԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 161-րդ հոդվածի 2-րդ մասի և 163-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումը՝ **հրամայում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ Ալինա Նալբանդյանին տրամադրել իր ամենամյա նվազագույն արձակուրդի մասն ու լրացուցիչ արձակուրդը՝ 2016 թվականի սեպտեմբերի 24-ից 2017 թվականի սեպտեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 14 աշխատանքային օր տևողությամբ 2017 թվականի ապրիլի 21-ից մայիսի 12-ը ներառյալ:

Հիմք՝ Ա. Նալբանդյանի 2017 թվականի ապրիլի 13-ի դիմումը:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ արձակուրդային վճար՝ ամսական միջին աշխատավարձի չափով:

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ